

### Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11.11.2019թ.  
Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Շատվերյան

Ռ. Եղիազարյան

Ար. Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝

Գ. Գևորգյան

**1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին**

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունելի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 22.10.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ԱՍՔՄԵԴԴիզայն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել էր Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 05.11.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

## 1. Մասնագիտական փորձառության մասով

Մասնակցի կողմից ներկայացված N CR4/B-C/029-15 պայմանագրի ընդերքում ներկայացվել է անգլերեն լեզվով և հանձնաժողովի կողմից գնահատվել որպես նմանատիպ պայմանագիր, սակայն վերջինիս պատշաճ կատարումը գնահատելու համար չի ներկայացվել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող փաստաթղթի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը հաստատող փաստաթուղթը:

## 2. Աշխատանքային ռեսուրսների մասով

Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում՝

ա) բացակայում է ճարտարագետ-շինարարի մասով՝ ճարտարագետ-կոնստրուկտորի գործունեություն իրականացնելու առաջին դասի <Ա1> ենթադասի արտոնագիրը կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիրը (մասնագետի անվան առկայությամբ),

բ) չի ներկայացվել Մանվել Հովհաննիսյանի բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը,

գ) բացակայում են կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների (Ջավեն Մուրադյան, Աստղիկ Գյոզալյան և Հայկ Կարապետյան) իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու մասին համաձայնությունները:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 05.11.2019թ. ծանուցվել է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում արվել է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

## 2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/32 ծածկագրով գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակցից ճանաչել <<ԱՍՔՄԵԴԴիգայն>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

